Սույն ուսումնասիրությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Արդարադատության ոլորտի բյուջեի մոնիթորինգ և վերլուծություն իրականացում» ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Տնտեսական իրավունքի կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Հայաստանի Հանրապետության արդարադատության ոլորտի 2025թ. բյուջեի վերլուծություն

I. Ընդհանուր ակնարկ

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականից մեկնարկել է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) համակարգի ներդրումը, ինչը ունեցել է փորձարարական և ներդրման երկարատև ժամանակաշրջան: 2003 թվականից այդ համակարգը ամրագրվել է օրենքով՝ որպես բյուջետային գործընթացի անբաժանելի մաս: **Միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել կառավարել պետական հատվածի ֆինանսական ռեսուրսները միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հիմք է ծառայում պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար**:

Ահա այդ համատեքստում էլ՝ «Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի» (հաստատված ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1064 – Ն որոշմամբ) շրջանակներում ՀՀ ազգային ժողովի կողմից 2024 թ. դեկտեմբեր 4-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը (ասուհետ՝ Օրենք):

Օրենքով ՀՀ 2025թ-ի պետական բյուջեն **եկամուտների** գծով հաստատվել է **2,837.6 մլրդ դրամի**, **ծախսերի գծով՝ 3,441.6 մլրդ դրամի** չափով: Պետական բյուջեի **դեֆիցիտը (պակասուրդը) սահմանվել է 604.0 մլրդ դրամի** չափով:

Հայաստանի Հանրապետության **Արդարադատության ոլորտում** (այսուհետ՝ **Ոլորտ**) իրականացվող ծախսերը բյուջեում ներկայացվում են **արդարադատության և դատական գործունեության ծրագրերով**, որոնք համակարգվում են մի կողմից՝ **պետական կառավարման գործադիր մարմնի** (այսուհետ՝ ՊԿՄ)՝ **ՀՀ արդարադատության նախարարության** (ԱՆ), և մյուս կողմից՝ **սահմանադրական անկախ և ինքնավար 7 մարմինների** (այսուհետ՝ **ՍԱԻՄ**) **կողմից**, որոնք են ՀՀ սահմանադրական դատարանը (ՍԴ), Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ), ՀՀ դատախազությունը (Դատախազություն), ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն (ՀԿԿ), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ), ՀՀ քննչական կոմիտեն (ՔԿ) և Մարդու իրավունքների պաշպանի (ՄԻՊ) աշխատակազմը:

2025թ-ին **Ոլորտի** ծրագրերի իրականացման համար կտրամադրվի **75.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.21 մլրդ դրամով կամ 0.3 տոկոսով (Ո**լորտին հատկացված բյուջետային միջոցները և մակրոտնտեսական մի շարք ցուցանիշները և դրանց տարեկան հարաշարժը 2019-2025 թվականներին բնութագրվում են **հավելվածներ 1-ի և 2-ի** տվյալներով):

Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների **տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի** (այսուհետ՝ ՀՆԱ) **մեջ կկազմի 0.69 տոկոս, ինչը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.03 տոկոսային կետով: Ընդ որում, այդ ցուցանիշը նույն 0.03 տոկոսային կետով զիջում է 2019-2024թթ-ի միջին 0.72 տոկոս ցուցանիշին:**

Նույն կերպ **Ոլորտին** հատկացված ծրագրերին ուղղված բյուջետային միջոցները **ՀՀ 2025 թ. պետական բյուջեի** (այսուհետ՝ ՊԲ) **ծախսերի մեջ նվազել են 0.16 տոկոսային կետով** և կազմում են **ՊԲ ծախսերի 2.19 տոկոսը՝ 2019-2024թթ-ի միջին 2.57 տոկոսի պարագայում: Այսինքն, ՊԲ 2025 թ. ծախսերի մեջ Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը էապես՝ 0.38 տոկոսով, նվազել է** (տե՛ս Ինֆոգրաֆիկա 1-ը)**:**

Ինֆոգրաֆիկա 1



Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ Վիճակագրության պետական կոմիտե

Չնայած այն հանգամանքին, որ 2021-2024 թվականներին արձանագրվել էին **Ոլորտի** ֆինանսավորման ծավալների հարաշարժի բարձր տեմպեր՝ **միջինում 114.3 տոկոս** (մասնավորապես՝ 2023-ին **Ոլորտի** գրեթե բոլոր պետական մարմինների դեպքում արձանագրվել են ֆինանսավորման ծավալների ամենաբարձր աճ՝ ընդանուր առմամբ **միջինում 25.3 տոկոսով**), այդուհանդերձ 2025 թ. այդ տեմպերը նվազել են և դիտարկվել է բյուջետային հատկացումների նվազման միտում նախորդ տարվա նկատմամբ **0.3 տոկոսային կետով:**

Վերոհիշյալի հետ մեկտեղ շատ հետաքրքիր է ոլորտին հատկացված բյուջետային միջոցների **հարաշարժը 2019-2025 թթ. ընթացքում** ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների հարաշարժի համեմատությամբ (տե՛ս հավելված 3-ի տվյալները): Այսպես, եթե **ՀՆԱ-ն այդ ժամանակաընթացքում միջինում տարեկան աճել է 9.2 տոկոսով, ՊԲ ծախսերը՝ 13.5 տոկոսով,** ապա **Ոլորտի ծախսերը միջինում աճել են 8.8 տոկոսով, ինչը 4.7 տոկոսային կետով զիջում է նույն ժամանակահատվածում պետական բյուջեի ընդամենը ծախսերի միջին տարեկան աճի մակարդակը**: Այսինքն, եթե 2019 թ. նկատմամբ ՀՆԱ-ն 2025 թ. կաճի 1.7 անգամ, ՊԲ-ն՝ 2.1 անգամ, ապա Ոլորտին հատկացված բյուջետային միջոցներն՝ ընդամենը 1.6 անգամ: Այդ պարագայում նկատելիորեն դանդաղել են նաև Ոլորտին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռների ցուցանիշները: **Այսպես, ՀՆԱ-ի միջին տարեկան 9.2 տոկոսային կետով աճի պարագայում դրա մեջ Ոլորտի տեսակարար կշիռը միջինում աճել է սոսկ 0.23 տոկոսային կետով: Իսկ ահա ՊԲ ծախսերի միջին տարեկան 13.5**

տոկոսային կետով աճի պարագայում դրա մեջ Ոլորտի տեսակարար կշիռը միջինում արդեն նվազել է շուրջ 14 տոկոսային կետով:

Թեև 2025 թ. **Ոլորտին** հատկացվող բյուջետային միջոցները ՀՀ մշտական բնակչության մեկ մարդու հաշվով 2019-2025թթ. ժամանակաշրջանի **միջին տարեկան ցուցանիշի համեմատ շատ են շուրջ 5,0 հազար դրամով կամ էլ միջին մակարդակի նկատմամբ ավելացել են մեկ քառորդով**, այդուհանդերձ դրանք բավարար չեն երկրում **ՀՀ սահմանադրությամբ ՀՀ քաղաքացիներին երաշխավորված բազմաթիվ իրավունքների և ազատությունների իրացման համար**:

2025 թ. **Ոլորտին** հատկացված ընդհանուր բյուջետային միջոցներից **2,462.9 մլն դրամը** կամ ընդհանուր ծախսերի **3.3 տոկոսը** հատկացվել է **կապիտալ ծախսերին:** Ընդ որում, այդ ծախսերի մեջ ԱՆ-ին հատկացված միջոցները կազմում են դրանց 42.3 տոկոսը, իսկ ՍԱԻՄ մարմիններին՝ 57.7 տոկոսը **(Ո**լորտին հատկացված կապիտալ ծախսերի ցուցանիշները 2019-2025 թվականներին բնութագրվում են **հավելվածներ 4-ի և 5-ի տվյալներով)**:

ԱՆ հատկացված կապիտալ ծախսերը կազմում են Ոլորտին բյուջետային ընդհանուր հատկացումների **1.4 տոկոսը, իսկ ՍԱԻՄ մարմինների՝ 1.9 տոկոսը**:

Ոլորտին հատկացված բյուջետային կապիտալ ընդհանուր ծախսերից **332.0 մլն դրամը կամ էլ 13.5 տոկոսը հատկացված է կառուցման աշխատանքներին, համապատասխանաբար՝ 990.2 մլն դրամը կամ 40.2 տոկոսը՝ վերակառուցման, վերանորոգման և վերականգնման աշխատանքներին, 168.0 մլն դրամը կամ 6.8 տոկոսը՝ նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանք-ներին, 972.7 մլն դրամը կամ 39.5 տոկոսը՝ ոչ ֆինանսական այլ ակտիվների ձեռքբերմանը:** Ընդ որում, վերջին ծախսերը վերաբերում են միմիայն այդ մարմինների կարողությունների զարգացմանը և տեխնիկական հագեցվածության ապահովմանը: Այդ ծախսերի 55.8 տոկոսը հատկացված է ԱՆ կենտրոնական ապարատի և պրոբացիայի, քրեակատարողական, հարկադիր կատարման ծառայությունների աշխատակազմերին, իսկ 44.2 տոկոսը՝ ՍԱԻՄ բոլոր 5 մարմինների աշխակազմերին, բացառությամբ Քննչական կոմիտեի: Վերջինիս 2025 թ. համար հատկացվել է **990.2 մլն դրամ՝ դրա շենքային պայմանների բարելավման նպատակով, ինչը կազմում է Ոլորտին հատկացված կապիտալ ծախսերի 40.2 տոկոսը**: ԱՆ-ին հատկացվել է 0,5 մլրդ դրամ՝ քրեակատարողական նոր հիմնարկի կառուցման (332.0 մլն դրամ) և նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական աշխատանքների (168.0 մլն դրամ) համար:

Նույն կերպ ոչ ՀՀ 2025-2027 թթ. ՄԺԾԾ-ում, ոչ ՀՀ 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության, հետևաբար՝ նաև ոչ էլ 2025 թ. պետական բյուջեում համապատասխան միջոցներ չեն հատկացվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի շենքային պայմանների բարելավման ուղղությամբ: Մինչդեռ դա որպես

լուրջ մարտահրավեր է մշտապես նշվել ինչպես այդ կառույցի բյուջետային հայտերում, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ՀՀ 2019-2022 թթ. Հակակոռուպցիոն 4-րդ ռազմավարության այլընտրանքային մոնիթորինգի արդյունքների մասին զեկույցի մեջ: Ավելին, դեռևս 2019 թ. փետրվարի 14-ին Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան և Իրավաբանների հայկական ասոցիացիան պատրաստել էին հակիրճ տեղեկանք հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ներդման վերաբերյալ: Տեղեկանքում նշվել էր, որ Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ կոռուպցիայի դեմ պայքարն իրականացվել է ապակենտրոնացված համակարգի միջոցով, երբ կոռուպցիայի դեմ պայքարելու լիազորություններ են ունեցել մի շարք պետական մարմիններ, բայց չենք ունեցել գեթ մեկ մարմին, որը պատասխանատվություն է կրել գրանցած, այդ թվում՝ բացասական արդյունքների համար: Կոալիցիան և ԻՀԱ-ն վերանայել են հիշյալ հակիրճ տեղեկանքը և մշակել են նոր տեղեկանք, որում ներկայացրել են **կենտրոնացված հակակոռուպցիոն համակարգի առավելությունները**, **ապակենտրոնացված համակարգի թերությունները և համընդհանուր չափանիշներ**, որոնք պետք է ունենա հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը՝ անկախ մոդելի ընտրության տեսակից: Հենց այս առաջարկության պարագայում էլ խիստ անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կառավարությունը ձեռնամուխ լինի հակակոռուպցիոն մարմինների վերակազմակերպման ու դրանց միավորման աշխատանքին, ինչի նպատակով էլ նախաձեռնի նոր վարչական մարմին ժամանակակից վարչական շենքի նախագծումն ու կառուցումը, որտեղ կմեկտեղվեն հակակոռուպցիոն պայքարին կոչված բոլոր մարմինները, ինչը էապես կբարելավի դրանց աշխատանքի արդյունավետությունը:

2025 թ. **Ոլորտին** հատկացված բյուջետային միջոցները ՀՀ մշտական բնակչության (2025 թ. ցուցանիշի մակարդակն ընդունվել է՝ 2,991.3 հազար մարդ՝ նախորդ տարվա ցուցանիշից 100.000 մարդով ավելի) մեկ շնչի հաշվով միջինում կազմել են **25,139.6 ՀՀ դրամ՝ 2024 թ. 25,214.3 ՀՀ դրամի դիմաց, 74.7 դրամով կամ էլ 0.3 տոկոսային կետով պակաս: Այդ ցուցանիշը 5,817.5 դրամով կամ էլ ավելի քան 30.0 տոկոսային կետով գերազանցում է նույն ցուցանիշի 2019-2024 թթ. միջին մակարդակը** (տե՛ս հավելված 1-ի տվյալները):

Ոլորտում 2025 թ. նախատեսված չի որևէ **վարկային և դրամաշնորհային ծրագիր և միջոցառում՝ օ**տարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացնելու համար, մինչդեռ Ոլորտի մարմինները այդպիսի աջացության լուրջ կարիք ունեն՝ **ապահովելու համապատասխան ոլորտային բարեփոխումների գործող ռազմավարություններով և ՀՀ կողմից կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններով և հանձնառություններով նախատեսված նպատակների ու արդյունքային ցուցանիշների կատարումը:**

II. Արդարադատության ոլորտի բյուջեի վերլուծությունն ըստ ծրագրերի

2025-2027 թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում **արդարադատության ոլորտում** շարունակաբար իրականացվելու է ոլորտային ռազմավարություններով նախանշված պետական քաղաքականությունը հետևյալ ոլորտներում.

- հարկադիր կատարման, քրեակատարողական, պրոբացիայի, սնանկության, փաստաբանության, հաշտարարության, նոտարական գործունեության,
- քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման, անհատ ձեռնարկատերերի հաշվառման, զանգվածային լրատվության միջոցների հաշվառման,
- անձնական տվյալների պաշտպանության, շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման,
- իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների գործունեության ոլորտներում:

Քրեակատարողական և պրոբացիայի համակարգում իրավիճակը բարելավելու, ինչպես նաև քրեական պատիժների նպատակային իրագործումն առավել արդյունավետ դարձնելու համար թիրախավորվել են հետևյալ առանցքային նպատակները՝ միջազգային չափանիշներին համահունչ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավումը, ազատությունից զրկված անչափահաս անձանց պահման պայմանների բարելավումը, ազատությունից զրկված և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմանների ապահովումը, դատապարտյալների և պրոբացիայի շահառուների վերասոցիալականացումը, քրեակատարողական հիմնարկների օպտի-մալացումն ու արդիականացումը, քրեակատարողական ծառայության և քրեակատա-րողական հիմնարկների կառավարման մոդելի և կադրային քաղաքականության կատարելագործումը, պրոբացիայի ծառայության գործունեության արդյունավետության բարձրացումը:

Միջնաժամկետ հատվածում դատահիրավական ոլորտում աշխատանքներն ուղղված են լինելու Սահմանադրական բարեփոխումների անցկացմանը, դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդմանը, դատավորի թեկնածուի հավակնորդների բարեվարքության ստուգմանը, դատարանների շենքերի և

նյութատեխնիկական պայմանների բարելավմանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների միասնական հարթակի ապահովմանը, սնանկության համակարգի արդյունավետության բարձրացմանը, վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացմանը, Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ներդրմանը:

Հակակոռուպցիոն բնագավառում իրականացվելու են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մեխանիզմների բարեփոխումներ, հանրային իրազեկման ծրագրերի շարունակական իրականացում, Հակակոռուպցիոն և վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանների գործունության ապահովում, կոռուպցիայի հաղթահարում:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվելու են մասնավորապես՝ Մարդու իրավունքների պաշտպանվածության և մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծում, բոլորի՝ օրենքի առջև հավասարության երաշխավորում, խտրականության դրսևորումների կանխում, ինչպես նաև հավասար իրավունքների իրագործում, օրենսդրական երաշխիքների ամրագրում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակների ընդլայնում:

Միջնաժամկետ այդ նպատակադրումների շրջանակներում Ոլորտում պետական քաղաքականությունը 2025թ.-ին կիրականացվի **16 բյուջետային ծրագրերի միջոցով**, որոնցից 7-ը համակարգվում են ԱՆ-ի կողմից, 3-ը՝ Դատախազության կողմից, իսկ մյուս **6 ՍԱԻՄ** մարմինները իրականացնում են մեկական ծրագիր (տե՛ս հավելված 6-ի տվյալները):

Ոլորտային ծրագրերի բյուջեի **31.7 տոկոսը կամ 23,8 մլրդ դրամն ուղղվում է ԱՆ** ծրագրերի իրականացմանը, իսկ **68.3 տոկոսը կամ 51,4 մլրդ դրամը՝ 7 ՍԱԻՄ մարմինների** ծրագրերի իրականացմանը:

Ֆինանսավորման ծավալներով ԱՆ-ից հետո հաջորդող դիրքերում են Քննչական կոմիտեն, ԲԴԽ-ն և Դատախազությունը, համապատասխանաբար ոլորտում ծախսերի մեջ **25.2, 22.8 և 13.2 տոկոս կշիռներով**: ՀԿԿ-ին հատկացված բյուջետային միջոցները կազմում են ոլորտային ողջ բյուջետային ծախսերի **4.6 տոկոսը,** համապատասխանաբար՝ **Սահմանադրական դատարանի՝ 1.2, ՄԻՊ աշխատակազմի՝ 0.8 և ԿԿՀ-ի՝ 0.5 տոկոսը:**

2025թ-ին ամենամեծ աճի տեմպը նախատեսված է **ՀՀ քննչական կոմիտեի ֆինանսավորմանը՝ 108.7 տոկոս:** Աճի տեմպով հաջորդում են **ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրականացվող ծրագրերը՝ 103.1 տոկոս, ԱՆ կողմից իրականացվող բոլոր ծրագրերը՝ 102.7 տոկոս:** Ընդ որում, ԱՆ «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրին ուղղված ծախսերը կաճեն 7.6 տոկոսով, իսկ «Հարկադիր

կատարման ծառայություններ» ծրագրի՝ 7.2 տոկոսով: Դրան հակառակ **կնվազեն ԲԴԽ ծախսերին ուղղված բյուջետային միջոցները 10.5 տոկոսով, համապատասխանաբար՝ ՀԿԿ՝ 6.3 տոկոսով, ԿԿՀ՝ 1.7 տոկոսով, Դատախազությանը՝ 1.3 տոկոսով: ՄԻՊ աշխատակազմի ծախսերը կմնան անփոփոխ** և կկազմեն 587.1 մլն դրամ կամ ոլորտային բյուջետային ծախսերի 0.78 տոկոսը:

Ոլորտում իրականացվող ամենամեծ ծրագիրը ՀՀ քննչական կոմիտեի «ՀՀ քննչական ծառայություններ» ծրագիրն է, որին ուղղված է **շուրջ 19,0 մլրդ դրամ կամ էլ ոլորտային ողջ բյուջեի 25.2 տոկոսը**: Վերջինիս վրա նախատեսված ծախսերը նախորդ տարվա համեմատ **կաճեն 8.7 տոկոսով:**

Ըստ ֆինանսավորման ծավալների երկրորդ և երրորդ տեղերում են ԲԴԽ-ի **«Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագիրը և ՀՀ Դատախազության «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագիրը,** որոնց համապատասխանաբար **հատկացվել են՝ 17.2 մլրդ դրամ և 9.3 մլրդ դրամ կամ էլ ողջ ոլորտային բյուջեի 22.8 տոկոսը և 12.4 տոկոսը:** Ընդ որում, նախորդ տարվա համեմատ «Դատական իշխանության գործունեության ապահովում և իրականացում» ծրագրի համար նախատեսված ծախսերը **կնվազեն 10.5 տոկոսով, իսկ «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն» ծրագրի ծախսերը կաճեն 1.5 տոկոսով**:

Ֆինանսավորման բացարձակ աճի առումով առաջին տեղում է **ՀՀ Քննչական կոմիտեի «ՀՀ քննչական ծառայություններ» ծրագիրը, որի բյուջեն 2025թ-ին կաճի մոտ 1,5 մլրդ դրամով կամ 8.7տոկոսով**: Երկրորդ դիրքում է ԱՆ **«Քրեակատարողական ծառայություններ» ծրագիրը, որի ծախսերի աճը կկազմի 1.05 մլրդ դրամ կամ 7.6 տոկոս**: Հաջորդում է ԱՆ **«Հարկադիր կատարման ծառայություններ» ծրագիրը, որի աճը կկազմի 225.2 մլն դրամ կամ 7.2 տոկոս**:

Միջնաժամկետ վերոհիշյալ քաղաքականությունների շրջանակներում 2025թ. նախատեսված **16 բյուջետային ծրագրերով նախատեսված է իրականացնել 67 քաղաքականության միջոցառումներ** (տես հավելված 7-ի տվյալները): Բոլոր բյուջետային ծրագրերի համար մշակված են **առանձնահատուկ նպատակներ և վերջնական արդյունքի ցուցանիշներ**:

Բոլոր 67 ՔՄ-ների համար մշակվել են 713 ոչ ֆինանսական (կատարողական) ցուցանիշներ, այդ թվում՝ 475 քանակական, 196 որակական և 42 ժամկետային ցուցանիշներ:

Սակայն մշակված բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի և քաղաքականության միջոցառումների ոչ ֆինանսական (կատարողական) ցուցանիշներից **շատերը չեն բխում կամ էլ չեն համապատասխանում**.

- ՄԱԿ կողմից հաստատված «Կայուն զարգացման 2023 օրակարգով» (այսուհետ՝ **ԿԶՆ**) նախանշված **կայուն զարգացման** հետևյալ **փոխկապակցված նպատակներին՝ ԿԶՆ 1, 3, 4, 5, 8, 10,**
- ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի (UNCAC) (Գլխավոր Ասամբլեայի 58/4 բանաձև, հավելված) 5-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված պարտավորություններին,
- Հակակոռուպցիոն ռազմավարությունների վերաբերյալ Կուալա-Լումպուրի 2013 թ. հոկտեմբերի 21-22 հայտարարությամբ սահմանված ուղենիշներին,
- ԵՄ և Հայաստանի միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (այսուհետ՝ ՀԸԳՀ) Հայաստանի կողմից ստանձնած հանձնառություններին՝ **օրենսդրության մոտարկման և ՔՀԿ-ների հետ կառուցողական երկխոսության և համագործակցության, հատկապես մոնիթորինգի հարցերում,**
- Հայաստանի Հանրապետության 2023-2026 թթ. հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարությամբ սահմանված նպատակներին ու միջոցառումներին,
- Հայաստանի Հանրապետության 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված նպատակներին ու միջոցառումներին:

Վերջնական արդյունքի և ոչ ֆինանսական (կատարողական) ցուցանիշների **հիմնական մասը** (բացառությամբ ՀՀ դատախազության 1087, 1013, 1144 ծրագրերի) համապատասխանում են.

- ՄԱԿ կողմից հաստատված «Կայուն զարգացման 2023 օրակարգով» (այսուհետ՝ **ԿԶՆ**) նախանշված **կայուն զարգացման** որոշ **փոխկապակցված նպատակներին** (16-րդ նպատակի 16.5 և 16.6 կետերը),
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրով նախատեսված նպատակներին ու միջոցառումներին:

Սակայն դրանք էլ իրենց հերթին շատ հաճախ.

- մշակված չեն եղել վերոհիշյալ **ռազմավարական ծրագրերին համահունչ**,
- **չեն համապատասխանում** նշված ռազմավարական փաստաթղթերի նպատակներին, հանձնառություններին,
- բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի, ոչ ֆինանսական ցուցանիշները **չափելի, հուսալի, արժանահավատ և օգտակար չեն:**

Միաժամանակ, չկան **վստահելի տեղեկատվության աղբյուրներ ծրագրերի վերջնական շահառուներից** (ՀՀ քաղաքացիներ, քաղաքացիական հասարակության

կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ))՝ **մշակված վերջնական արդյունքի և ոչ ֆինանսական, կատարողական ցուցանիշների վերաբերյալ արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն հավաքագրելու համար**: **Այդ տեղեկատվությունը լրացվում է հենց իրենց՝ բյուջետային ծրագրեր մշակողների և իրականացնողների կողմից, ինչը թույլ չի տալիս համոզվել դրանց արժանահավատության մեջ:** Ավելին, այդ գործում անբավարար է ՊԿՄ և ՍԱԻՄ մարմինների կառուցողական համագործակցությունը ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների հետ, որոնք ունեն բավարար ներուժ օգնելու վերոհիշյալ մարմիններին:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ Ոլորտի մարմինների աշխատակիցներն ունեն որոշակի դժվարություններ բյուջետային ծրագրերի **վերջնական արդյունքի, ոչ ֆինանսական ցուցանիշների մշակման, դրանց կատարման մասին հուսալի, ամբողջական ու արժանահավատ տեղեկատվություն հավաքագրելու գործում:**

Հետևաբար խիստ անհրաժեշտություն է դառնում.

- բարելավել բյուջետային ծրագրերի **վերջնական արդյունքի** և քաղաքականության միջոցառումների **ոչ ֆինանսական (կատարողական) ցուցանիշների մշակման աշխատանքները**,
- այդ նպատակով իրականացնել ՊԿՄ, ՍԱԻՄ մարմինների և ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնագիտական որակավորման բարձրացման ուղղությամբ շարունակական ուսումնական ծրագրեր,
- բոլոր քաղաքականության միջոցառումների համար մշակել հստակ ու չափելի **ֆինանսական (կատարողական) ցուցանիշներ,**
- մշակել և իրականացնել հստակ ծրագրեր հակակոռուպցիոն բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի, ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ **առավել ամբողջական, արդյունավետ, հուսալի, արժանահավատ, օգտակար ու չափելի տեղեկատվություն հավաքագրելու ուղղությամբ,**
- մշակել և իրականացնել հստակ համագործակցության ծրագրեր արհեստավարժ ՔՀԿ-ների, դրանց ցանցերի, ԶԼՄ-ների հետ՝ բյուջետային ծրագրերի կատարման մշտական մոնիթորինգ իրականացնելու ուղղությամբ,
- և այլն:

III. Արդարադատության նախարարության բյուջետային ծրագրերի վերլուծությունը

ՀՀ արդարադատության նախարարության բյուջեն 2025-ին կկազմի **23.8 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ կաճի 2.7 տոկոսով:**

2025թ. իրականացվող ծրագրերի քաղաքականությունները ՀՀ արդարադատության նախարարության համակարգում հիմնականում ուղված են լինելու.

1. <u>Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիտորինգի իրականացմանը, որի շրջանակներում նախատեսված են իրականացնելու հետևյալ միջոցառումները.</u>

- Արդարադատության արդյունավետության բարձրացման համար կշարունակվեն վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգմացմանն ուղղված աշխատանքները: Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնին կտրամադրվի աջակցություն:
- Նոր մասնագիտացված դատարանների և դատավորների ենթամասնագիտացումների ստեղծման անհրաժեշտության և նպատակահարմարություն գնահատում
- Սնանկության ոլորտի բարեփոխումներ. արդեն իսկ մշակված հայեցակարգի հիման վրա մշակել սնանկության մասին մեկ միասնական իրավական ակտի նախագիծ,
- Առևտրային կազմակերպություններին վերաբերող իրավակարգավորումները կորպորատիվ իրավունքի ժամանակակից մոտեցումներին համապատասխանեցնելու ուղղությամբ աշխատանքներ,
- Իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումներ- անհատույց (pro bono) իրավաբանական օգնության տրամադրման կառուցակարգերի խրախուսման և դրանց պատշաճ տրամադրումն ապահովող այլ միջոցների նախատեսում,
- 2025թ. Ոլորտում նախատեսվում է իրականացնել տարբեր էլեկտրոնային հարթակների ներդրման և արդիականացման աշխատանքներ, շարունակել և ավարտել ընթացիկ ծրագրերը, ապահովել համակարգերի սպասարկումը,
- Մշակվելու են տեխնիկական առաջադրանքներ քրեական գործերով էլեկտրոնային համակարգի, միասնական «էլեկտրոնային նոտար» համակարգի, դատական արխիվի էլեկտրոնային կառավարման համակարգի, քրեակատարողական էլեկտրոնային կառավարման նոր համակարգի համար, նախատեսվում է սկսել մրցութային ընթացակարգեր: Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային արդարադատության միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, ինչպես նաև ազգային արխիվի միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ,

- վեճերի այլընտրանքային լուծման եղանակների զարգացումը: Այս նպատակով 2023-ին Հայաստանում մեկնարկել է Արբիտրաժային կենտրոնի գործունեությունը: Կենտրոնի կայացումը կնպաստի ինչպես դատական համակարգի ծանրաբեռնվածության կրճատմանը, այնպես էլ՝ ներդրումային միջավայրի բարելավմանը: 2025թ-ին արբիտրաժային կենտրոնի գործունեության ապահովմանը կուղղվի 180մլն դրամ:

2. <u>Քրեակատարողական, պրոբացիայի, հարկադիր կատարման համակարգի կատարելագործման քաղաքականությունը, որի շրջանակներում նախատեսված են իրականացնելու հետևյալ միջոցառումները և նպատակադրումները.</u>

- զարգացնել Պրոբացիայի ծառայության կարողությունները և հզորացնել կադրային ներուժը, ինչպես նաև բարելավել սոցիալական երաշխիքները.
- խթանել պրոբացիայի համակարգում էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառումը՝ ամբողջությամբ գործարկելով E-probation էլեկտրոնային կառավարման համակարգը և դրանով իսկ ապահովելով պրոբացիայի ծառայողների աշխատանքի թվայնացումը, փաստաթղթաշրջանառության կրճատումը, հաշվետու և թափանցիկ աշխատանքը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը.
- ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով Պրոբացիայի ծառայությանը զինել էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով ու ենթակառուցվածքներով և, ըստ այդմ, ապահովել իրավակիրառ պրակտիկայում էլեկտրոնային հսկողության փաստացի կիրառումը.
- ապահովել քրեակատարողական հիմնարկներում գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց, անչափահասների, մինչև 3 տարեկան երեխա ունեցող և հղի կանանց համար անհրաժեշտ և մատչելի պայմանները.
- ապահովել ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ անչափահասների կրթություն ստանալու իրավունքի շարունակականությունը, մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդնումը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց համար հանրակրթության իրականացումը՝ անկախ տարիքից.
- ներդնել քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանության և ինքնավնասման ռիսկի վերհանման և գնահատման, ինչպես նաև հոգեկան առողջության զննության և ռիսկի գնահատման գործիքակազմը՝ նախական-խելով ինքնասպանության և ինքնավնասման հետագա դեպքերի

առաջացումը, ինչպես նաև նախապես բացահայտելով հոգեկան առողջության վիճակի հնարավոր խնդիրը.

- բարելավել քրեակատարողական ծառայողների սոցիալական երաշխիքները, ինչպես նաև նպաստել քրեակատարողական ծառայողի նոր կերպարի ձևավորմանը:

3. <u>Քաղաքացիական կացության ակտերի գրանցման քաղաքականություն, որի շրջանակներում նախատեսված են իրականացնելու հետևյալ միջոցառումները և նպատակադրումները.</u>

- Նախատեսվում է ՔԿԱԳ էլեկտրոնային համակարգի /e-civil/ արդիականացում, մասնավորապես քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման կամ ՔԿԱԳ այլ գործառույթ կատարելու նպատակով՝ էլեկտրոնային դիմում ներկայացնելու համար էլեկտրոնային /www.e-services.moj.am/ հարթակի միջոցով մատուցվող ծառայությունների շրջանակի ավելացում:
- Միաժամանակ նախատեսվում է շարունակել ՔԿԱԳ փաստաթղթային արխիվի թվայնացմանն ուղղված աշխատանքները:

4. <u>Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի կառուցակարգերի կատարելագործում, որի շրջանակներում նախատեսված են իրականացնելու հետևյալ միջոցառումները և նպատակադրումները.</u>

- Նախատեսվում է արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության նոր տեղեկատվական համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում, առցանց իրականացվող պետական գրանցման/հաշվառման գործընթացների ընդլայնում, պետական գրանցում/հաշվառում ստացած արխիվային գործերի թվայնացմանն ուղղված աշխատանքների շարունակականության ապահովում, տարբեր համակարգերի և տվյալների շտեմարանների միջև փոխգործելիության շարունակականության ապահովում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված վարույթների թափանցիկ և արդյունավետ իրականացմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների ապահովում, վիճակագրության և հաշվետվությունների թափանցիկության ապահովմանն ուղղված ծրագրերի շարունակականության ապահովում:

5. <u>Անձնական տվյալների պաշպանության</u> կառուցակարգերի ***<u>կատարելագործում, որի շրջանակներում նախատեսված են իրականացնելու հետևյալ միջոցառումները և նպատակադրումները.</u>***

- Մշակել և հրապարակել անձնական տվյալների պաշտպանության լավագույն փորձի վերաբերյալ ուղեցույցներ, հասարակության լայն շրջանակներում իրականացնել թիրախային դասընթացներ, տեղեկատվական արշավներ, տրամադրել իրավախորհրդատվություններ,
- Ներդաշնակեցնել և կատարելագործել անձնական տվյալների մշակում նախատեսող օրենսդրական դաշտը,
- Հզորացնել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարողությունները, մասնավորապես՝ փոփոխել վերջինիս կառուցվածքային ստորաբաժանումները, ավելացնել լիազոր մարմնի աշխատողների թիվը, ապահովել վերջիններիս մասնագիտական վերապատրաստումը,
- Համագործակցել անձնական տվյալների պաշտպանության ոլորտի միջազգային դերակատարների հետ, մասնավորապես՝ Եվրաջասթի, Եվրոկոնտրոլի, Գաղտնիության ընդհանուր ասամբլեայի, Եվրոպայի խորհրդի մարմինների հետ, ինչպես նաև խորացնել համագործակցությունը տարածաշրջանային, բալկանյան և ԵՄ անդամ երկրների անձնական տվյալների պաշտպանության լիազոր Իրավական փոխօգնություն:

ԱՆ համակարգի բյուջետային ծրագրերի բյուջետային հատկացումների ծավալը և դրանց կառուցվածքը 2025 թ.բնութագրվում է ստորև ներկայացվող աղյուսակի տվյալներով.

Ծրագրի Դասիչ	Ծրագրի անվանում	2024	2025	Ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ, տոկոս
Ա	Բ	1	2	3
1052	Քաղաքացիական կացության ակտերի գրացում	**156,433.2**	**156,433.2**	**0.66**
1057	Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում,	**2,303,968.3**	**2,229,330.9**	**9.37**

	խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում			
1093	Դատական և հանրային պաշպանություն	**2,063,146.5**	**1,575,572.8**	**6.62**
1120	Քրեակատարողական ծառայություններ	**13,762,900.4**	**14,811,492.1**	**62.23**
1123	Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում	**1,235,896.7**	**1,252,412.8**	**5.26**
1149	Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատ-րաստում և հատուկ ուսուցում	**530,971.3**	**427,227.6**	**1.79**
1182	Հարկադիր կատարման ծառայություններ	**3,137,972.3**	**3,362,180.0**	**14.13**

Աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն

ՀՀ արդարադատության ոլորտի քաղաքականության իրականացման նպատակով 2025 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 23.8 մլրդ դրամ, այդ թվում՝ կապիտալ ծախսերի գծով՝ 1.04 մլրդ դրամ:

Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման, խորհրդատվության և մոնիտորինգի ծրագրի գծով 2025 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագրով և Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում սահմանված միջոցառումները: **Մասնավորապես, նախատեսվում է ապահովել ռազմավարություններից բխող 435 իրավական ակտերի նախագծերի մշակում, 5.000 պետական փորձագիտական եզրակացությունների, կարծիքների, դիրքորոշումների տրամադրում: Նախատեսվում է իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված շարունակական աշխատանքների իրականացում և պետական ռեգիստրում գրանցման ենթակա 65.000 սուբյեկտների և նրանց առանձնացված ստորաբաժանումների պետական գրանցում և հաշվառում:** Նախատեսվում է ապահովել **անձնական տվյալների պաշտպանության ավելի բարձր մակարդակ,** մասնավորապես՝ համապատասխանեցնել անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարգավիճակն օրենքով սահմանված և միջազգային չափանիշներին՝ ապահովելով նաև մարդկային ռեսուրսների, մասնագիտական,

նյութական և տեխնիկական կարողությունների զարգացում: Անձնական տվյալների պաշտպանության նպատակով հասարակության իրազեկվածության նպատակով 2025 թվականին նախատեսվում է տրամադրել 300 խորհրդատվություն:

Այդ միջոցառումների համար նախատեսված է 2025թ. կատարել 2.2 մլրդ դրամի ծախս, ինչը կազմում է ԱՆ հատկացված բյուջետային միջոցների 9.37 տոկոսը: 2024թ. համեմատությամբ այդ ծախսերը նվազել են 74.6 մլն դրամով:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցում ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվում է շարունակել նվազեցնել ոլորտում առկա վարչարարությունը՝ ապահովելով շուրջ 166.000 գրանցումներ, վկայականների կրկնօրինակների, տեղեկանքների տրամադրում, մատուցվող ծառայությունների ավտոմատացման 100 տոկոս, մատուցվող ծառայությունների դիմաց ներկայացված բողոքների կրճատում՝ մինչև 5 տոկոս: **Այդ ծրագրին բյուջետային հատկացումները 2025 թ. կկազմեն 156.4 մլն դրամ՝ 2024 թ. նույն մակարդակին համապատասխան և կկազմեն ԱՆ բյուջետային ծախսերի սոսկ 0.66 տոկոսը:**

Դատական և հանրային պաշտպանություն ծրագրի գծով միջոցներն ուղղվելու են իրավունքի պաշտպանության հասանելիության և օբյեկտիվության ապահովմանը: Ծրագրի գծով 2025 թվականին նախատեսվել են միջոցներ՝ փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով, միաժամանակ ապահովելով առաջադրված հարցերի ընդհանուր քանակի մեջ փորձաքննությամբ լուծված հարցերի 95 տոկոս տեսակարար կշիռ: **Այդ ծրագրին 2025թ. բյուջետային հատկացումները 2024թ. համեմատ նվազել են 487.6 մլն դրամով և կազմում են ընդամենը 1,575.6 մլն դրամ, ինչը ԱՆ բյուջետային ծախսերի 6.62 տոկոսն է:**

ԱՆ կողմից իրականացվող ծրագրերի թվում ամենամեծը «Քրեակատարողական ծառայություններ» ծրագիրն է՝ 14.8 մլրդ դրամ բյուջեով, որը կազմում է **ԱՆ բյուջեի 62.23 տոկոսը: Այդ ծրագրի ֆինանսավորումը 2024թ. համեմատ ավելացել է ավելի քան 1.0 մլրդ դրամով կամ 7.6 տոկոսով: Այդ ավելացումը պայմանավորված է հիմնականում քրեակատարողական նոր հիմնարկի նախագծման և կառուցման աշխատանքների հետ:**

Ծրագրի նպատակն է դատապարտյալների պատժի կատարման և ուղղման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը և սպասվող վերջնական արդյունքն է դատապարտյալների զբաղվածության և իրավունքների պաշտպանությունը:

Սույն ծրագրի գծով 2025 թվականին հատկացված գումարները նախատեսվում է ուղղել քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման և արդիականացման ռազմավարական պլանները կյանքի կոչելուն, ազատությունից զրկված անձանց պահման պայմանների բարելավմանը, վերասոցիալականացման միջոցառումների իրականացմանը, տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակի

բարձրացմանը, պրոբացիայի ինստիտուտի զարգացմանն ու արձանագրված ոլորտային խնդիրների լուծմանը:

Ծրագրի բյուջեի ավելի քան 87.0 տոկոսը կուղղվի քրեկատարողական ծառայություններին, իսկ 5.97 տոկոսը՝ պրոբացիայի ծառայություններին:

Դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց թիվը 2025-ին կկազմի 3.000 մարդ: Պրոբացիայի տակ գտնվող շահառուների թիվը կաճի մոտ 52.27 տոկոսով և կկազմի 11.420 մարդ: 2025թ. էլեկտրոնայինն հսկողության համակարգի համար գումար չի հատկացվել, սակայն ձեռք են բերվելու հատուկ նշանակության 408 էլեկտրական ապրանքներ:

Ծրագրի շրջանակներում 2025թ. համար նախատեսված քաղաքականության միջոցառումները բնութագրվում են հետևյալ տվյալներով.

Ծրագրի Դասիչ	**Քաղաքականության միջոցառում**	**2024**	**2025**	**Տեսակարար կշիռը 2025թ. ծախսերի մեջ, %**
Ա	**Բ**	**1**	**2**	**3**
1120	**Քրեակատարողական ծառայություններ, ընդամենը**	**13,762,905.7**	**14,811,492.1**	**100%**
այդ թվում՝				
11001	Քրեակատարողական ծառայություններ	12,445,851.7	12,893,197.3	87.05%
11002	Պրոբացիայի ծառայություններ	777,688.8	884,564.2	5.97%
11005	Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում	175,211.5	195,140.2	1.32%
31001	ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կարողությունների զարգացում և տեխ նիկական հագեցվածության ապահովում	139,503.7	279,490.4	1.89%
31002	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	34,650	59,100	0.4%

31003	Քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների բարելավում	168,000	-	0
31006	Քրեակատարողական ծառայության տրանսպորտային միջոցներով ապահովվածության բարելավում	22,000	-	0
31008	Քրեակատարողական ծառայության տրանսպորտայի միջոցներով ապահովվածության բարելավում	-	500,000	3.37%

2025 թվականին շարունակվելու է քրեակատարողական հիմնարկներում գտնվող, իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրերի իրականացումը: Տարեկան հաստատված ծրագրերին մասնակցած և հավաստագրեր ստացած ունկնդիրների տեսակարար կշիռը մասնակիցների ընդհանուր թվաքանակի մեջ նախատեսվում է 80 տոկոս:

Կառավարությունը շարունակելու է վճռական մնալ վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում: Այս համատեքստում հիմնական թիրախային ուղղությունները լինելու են զարգացնել Պրոբացիայի ծառայության կարողությունները և հզորացնել կադրային ներուժը: Պրոբացիայի ծառայությունում հաշվառված շահառուների համար նախատեսվում է իրականացնել 260 կրթական, կրոնական, սպորտային, մշակութային միջոցառումներ, ավելացնել վերասոցիալականացման ծրագրերին մասնակցած շահառուների թիվը, հանրային աշխատանքներ պատժատեսակում ներգրավված շահառուների թիվը, արդյունքում ապահովելով կրկնահանցագործություն կատարած շահառուների թվի կրճատում:

Ազատությունից զրկելուն այլընտրանք հանդիսացող նոր պատժատեսակների և խափանման միջոցների արդյունավետ կիրառման նպատակով Պրոբացիայի ծառայությանը 2025 թվականին շարունակվելու է էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով ու ենթակառուցվածքներով վերազինումը և, ըստ այդմ, իրավակիրառ պրակտիկայում էլեկտրոնային հսկողության փաստացի և պատշաճ կիրառումը:

ԱՆ ծախսերի մեջ իր կշռով՝ 14.13 տոկոս, հաջորդում է «Հարկադիր կատարման ծառայություններ» ծրագիրը՝ ինչի իրականացմանը 2025թ. հատկացվել է 3.4 մլրդ դրամ: 2024թ. համեմատ ծրագրի բյուջետային հատկացումներն ավելացել են 224.2 մլն դրամով կամ 7.1 տոկոսով:

Այս ծրագրի շրջանակներում 2025թ. իրականացվելու է հարկադիր կատարման ոլորտի համընդհանուր բարեփոխումներ՝ բարձրացնելու կատարողական գործողությունների արդյունավետությունը, առավելագույնս ապահովելու կատարողական վարույթի մասնակիցների օրինական շահերի պաշտպանությունը, նրանց խնդիրներին

ու կարիքներին արագ և արդյունավետ արձագանքելու կառուցակարգերի ներդրմանը: 2025 թվականին նախատեսվում է ավարտել ընթացքի մեջ գտնվող կատարողական վարույթների 58 տոկոսը, բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ բռնագանձված գումարի տեսակարար կշիռը նախատեսվել է 15 տոկոս, իսկ աճուրդով վերականգնված գումարի տեսակարար կշիռը՝ 7 տոկոս:

«Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգում՝ «ԱՐԼԻՍ» կայքում լրացուցիչ մոտ 5.000 իրավական ակտի հրատարակում, տեղեկատվական համակարգի ամենշաբաթյա թարմացում, իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածուի պարբերական համալրում և ՀՀ, ԵՏՄ, ԵՄ իրավական ակտերի, ՀՀ ազգային զեկույցների, ՀՀ պետական մարմինների կողմից միջազգային կառույցներ ներկայացվող և այդ կառույցների կողմից ՀՀ մարմիններ ներկայացվող փաստաթղթերի և հանձնարարվող այլ առանցքային փաստաթղթերի թարգմանությունների կատարումը: **Ծրագրի նպատակն է ապահովել մոտ 3 տոկոս հանրային իրազեկվածության բարձրացում**: Ծրագրի իրականացման նպատակով 2025թ. համար հատկացված է 1,252.4 մլն դրամ, ինչը կազմում է ԱՆ բյուջետային ծախսերի 5.26 տոկոսը: **2024թ. համեմատ ծրագրի բյուջետային հատկացումներն ավելացել են սոսկ 16.5 մլն դրամով կամ 1.3 տոկոսով:**

«Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2250 հատուկ ծառայողների, 327 դատավորների, 257 դատախազների, 250 դատական կարգադրիչների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը: **Այդ ծրագրի բյուջետային հատկացումները 2024թ. համեմատ կնվազեն 103,7 մլն դրամով կամ շուրջ 20 տոկոսով և 2025թ. կկազմեն 427,2 մլն դրամ, ինչը ԱՆ բյուջետային ծախսերի 1.79 տոկոսն է:**

IV. Սահմանադրական անկախ և ինքնավար մարմինների բյուջետային ծրագրերի վերլուծությունը

1. ***<u>Սահմանադրական դատարանի (ՍԴ)</u>*** **կողմից 2025 թ. իրականացվելու է 1 բյուեջտային ծրագիր, ուղղված ՀՀ ՍԴ գործունեության ապահովմանը: Այս ծրագիրն իր մեջ ներառում է 3 ՔՄ՝ ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովում, ՀՀ սահմանադրական դատարանի պահուստային ֆոնդ, ՀՀ սահմանադրական դատարանի տեխնիկական հագեցվածության բարելավում: Այդ 3 միջոցառումներին նախատեսված է հատկացնել 870.4 մլն դրամ, ինչը 3.1 տոկոսային կետով ավել է 2024 թ. համեմատ և կազմում է Ոլորտին բյուջետային հատկացումների 1.16 տոկոսը:**

2025 թ. շարունակվելու են միջնաժամկետ հատվածի համար նախատեսված դատաիրավական բարեփոխումների շրջանակներում Սահմանադրական բարեփոխումների անցկացմանը, դատական իշխանության անկախության և անաչառության ամրապնդմանն ուղղված միջոցառումները:

2. ***<u>Բարձրագույն դատական խորհրդին (ԲԴԽ)</u>*** **2025 թ. կհատկացվեն 17,154.1 մլն դրամ, ինչը 2,019.6 մլն** դրամով **կամ 10.5 տոկոսով պակաս է 2024 թ համեմատ: Այդուհանդերձ ԲԴԽ-ին հատկացված բյուջետային միջոցները կկազմեն ՍԱԻՄ մարմինների բյուջետային ֆինանսավորման 33.3 տոոսը կամ էլ Ոլորտի ֆինանսավորման 22.8 տոկոսը:**

ԲԴԽ մարմինների կողմից 2025 թ. կիրականացվի 1 ծրագիր՝ ուղղված դատական իշխանության գործունեության ապահովմանն ու իրականացմանը, ինչի նպատակն է դատական իշխանության անկախության երաշխավորումը և բնականոն գործունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովումը: Ծրագրի վերջնական արդյունք է սահմանված **դատական իշխանության գուծունեության և դատական պաշտպանության իրավունքի ապահովման արդյունավետության բարձրացումը:**

Ծրագրի շրջանակներում նախատեսված է իրականացնել 23 քաղաքականության միջոցառումներ, որոնք ուղղված են լինելու.

- ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող 2022-2026 թվականների գործողությունների ծրագրով սահմանված միջոցառումների իրականացումը,
- ՀՀ սահմանադրությամբ ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց երաշխավորված բազմաթիվ իրավունքների և ազատությունների իրացման պաշտպանությանն ուղղված գործունեությունը:

3. <u>ՀՀ դատախազությանը 2025 թ. բյուջետային հատկացումները կկազմեն 9.9 մլրդ դրամ, ինչը 127.3 մլն դրամով կամ էլ 1.3 տոկոսով պակաս են 2024 թ. համեմատ:</u> Այդուհանդերձ, Դատախազության բյուջետային հատկացումները կկազմեն ՍԱԻՄ մարմինների բյուջետային ֆինանսավորման 19.3 տոոսը կամ էլ Ոլորտի ֆինանսավորման 13.2 տոկոսը, ինչը ապահովում է դրա 3-րդ դիրքը ոլորտային հատկացումների մեջ:

Դատախազության կողմից 2025 թ. կիրականացվի 3 ծրագիր՝ 5 քաղաքականության միջոցառումներով, որոնք ուղղված կլինեն.

- Դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության բարելավմանը,

- Փորձաքննության ծառայությունների ձեռքբերմանը,
- Համակարգի աշխատակիցների մասնագիտական ուսուցմանը և որակավորման բարձրացմանը:

Նշված ծրագրերով կանխատեսվում է իրականացնել հետևյալ նպատակները. հանցագործությունների բացահայտման մակարդակի բարելավում, ՀՀ-ում հանցավորության դեմ արդյունավետ պայքար, հանցագործության դեպքերի կանխարգելում և կրճատում, հանցագործության բոլոր դեպքերի առնչությամբ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության ապահովում, փորձաքննություններ նշանակելու և ելակետային տվյալների ձեռքբերման իրավասություն ունեցող համակարգերի աշխատանքի արդյունավետության բարելավում: Ծրագրերի իրականացմամբ ակնկալվում է հասնել հետևյալ վերջնական արդյունքներին.

- բացահայտված հանցագործությունների աճ,
- ՀՀ-ում մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացում, հանցավորությունների կանխարգելման արդյունավետության աճ,
- փորձաքննություններ նշանակելու և ելակետային տվյալների ձեռքբերման իրավասություն ունեցող համակարգերի աշխատակիցների աշխատանքի արդյունավետության աճ:

4. <u>ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին (ՀԿԿ) 2025թ. հատկացվող բյուջետային միջոցները 2024թ. համեմատ կնվազեն 6,3 տոկոսով կամ էլ 231.4 մլն դրամով և կկազմեն շուրջ 3,5 մլրդ դրամ:</u>

ՀԿԿ կողմից 2025 թ. կիրականացվի 1 ծրագիր՝ 3 քաղաքականության միջոցառումներով, ուղղված կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանը և քննության ապահովմանը: Ծրագրի նպատակն է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ենթակայությանը վերապահված քրեական գործերի քննության իրականացումը և օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը

Նշված ծրագրի իրականացմամբ ՀԿԿ-ն ակնկալում է հասնել հետևյալ վերջնական արդյունքին. **արդյունավետ օպերատիվ-հետախուզական գործունեություն, հետաքննություն և նախաքննություն՝ դրանց ողջամիտ ժամկետներում իրականացում:**

5. ***<u>ՀՀ քննչական կոմիտեին (ՔԿ) 2025 թ. հատկացվող բյուջետային միջոցները կկազմեն շուրջ 19 մլրդ դրամ, ինչը կազմում է Ոլորտին հատկացված</u>***

<u>բյուջետային միջոցների ավելի քան քառորդ մասը և ՍԱԻ մարմինների բյուջետային հատկացումների շուրջ 40.0 տոկոսը (որով ապահովվում է նրա առաջատար դիրքը):</u> ՔԿ-ին բյուջետային հատկացումները 2024 թ. համեմատ կավելանան 8.7 տոկոսով կամ էլ ավելի քան 1,5 մլրդ դրամի չափով: Այդ ավելացումը պայմանավորված է ՔԿ շենքային պայմանների բարելավմամբ (990,2 մլն դրամ) ու տրամադրվող փորձագիտական ծառայությունների ավելացմամբ (721,8 մլն դրամ):

ՀՀ ՔԿ կողմից 2025թ. կիրականացվի 1 ծրագիր՝ 8 քաղաքականության միջոցառումներով, ուղղված քննչական ծառայություններին:

Ծրագրի նպատակն է՝ հանցագործությունների օբյեկտիվ և արդյունավետ նախաքննության իրականացման ապահովուում, որի վերջնական արդյունքում ակնկալվում է հանցագործությունների արդյունավետ նախաքննություն, նախաքննության ժամկետների կրճատում:

6. <u>Հակակոռուպցիոն քաղաքականության ծրագրի շրջանակներում ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կողմից նախատեսված է իրականացնել 1 բյուջետային ծրագիր՝ ուղղված կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովմանը:</u>

ԿԿՀ-ին 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված է հատկացնել 405.7 մլն դրամ, ինչը 7.1 մլն դրամով կամ էլ 1.7 տոկոսով պակաս է 2024թ. համեմատությամբ: ԿԿՀ-ին հատկացված բյուջետային միջոցները կազմում են Ոլորտային հատկացումների սոսկ 0.54 տոկոսը կամ էլ ՍԱԻ մարմններին հատկացված բյուջետային միջոցների 0.79 տոկոսը:

Նշված ծրագրով նախատեսված է իրականացնել հետևյալ քաղաքականության միջոցառումները և նպատակադրումները.

- նպաստել կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացմանը և հանրային ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,
- հայտարարագրման համակարգի բարելավմանը, բարեվարքության ստանդարտների սահմանման և պահպանման հսկողությանը, հակակոռուպցիոն իրազեկմանը,
- կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացմանը, հայտարարագրերի ստուգմանն ու վերլուծությանը, օրենքով սահմանված պահանջների կիրառման ծառայությունների մատուցմանը,

- ԿԿՀ գործընկերային հարաբերությունների զարգացում, հանրային ճանաչելիության, օրենքով վերապահված գործառույթների և լիազորությունների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում, կրթական բաղադրիչի զարգացում
- կատարելագործել կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության ամրապնդման մեխանիզմները՝ կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության համակարգի տարրերին առնչվող օրենսդրական դաշտի համապարփակ և միասնական կարգավորումներ ներդնելով: Ներդրվելու են բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության կառուցակարգեր դատավորների, դատախազների և քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համար,
- Հզորացվելու են կոռուպցիայի դեմ պայքար մղող իրավապահ մարմինների, հակակոռուպցիոն դատարանների ինստիտուցիոնալ կարողությունները, կկատարելագործվեն կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ձեռք բերված գույքի, ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի և կառավարման, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության և ազդարարման կառուցակարգերը,
- շարունակական հակակոռուպցիոն կրթություն ապահովելու նպատակով՝ շարունակվելու են մանկապարտեզ-դպրոց-բուհ կրթական շղթայում դասավանդողների վերապատրաստման, դասավանդվող առարկայական ծրագրերի վերանայմանն ուղղված աշխատանքները: Հանրության շրջանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրազեկվածության բարձրացման, կոռուպցիայի դեմ պայքարում հանրության դերի կարևորման նպատակով ընդունվել և շարունակվում են իրականացվել հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագիրը,
- շարունակվելու են հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման նկատմամբ մոնիթորինգի և գնահատման ինստիտուտների կատարելագործման աշխատանքները, նախատեսվում է թվայնացնել գործընթացները և այլն:

Նշված ծրագրի և քաղաքականության միջոցառումների իրականացմամբ նախատեսվում է հասնել հետևյալ վերջնական արդյունքին՝ **Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարելավում:**

7. <u>Մարդու իրավունքների պաշպանության քաղաքականության շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) աշխատակազմը</u>

շարունակելու է իրականացնել Մարդու իրավունքների պաշտպանության 2023-2025թթ. ազգային ռազմավարությունից բխող գործողությունները:

Այդ ռազմավարության շրջանակներում ՄԻՊ աշխատակազմը 2025թ. կիրականացնի 1 բյուջետային ծրագիր՝ 2 քաղաքականության միջոցառումով:

Այդ ծրագրի իրականացման համար 2025 թ. բյուջետային հատկացումները **կպահպանվեն 2024թ. մակարդակի վրա և կկազմեն 587.1 մլն դրամ:** ՄԻՊ-ին բյուջետային հատկացումները կկազմեն **ոլորտային հատկացումների 0.78 տոկոսը և ՍԱԻ մարմիններին հատկացումների 1.1 տոկոսը:**

Ծրագրի նպատակ է սահմանված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, ինչը թույլ կտա հասնելու **ՀՀ-ում խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:**

Ծրագրի շրջանակներում նախատեսված են իրականացնել հետևյալ միջոցառումները և նպատակադրումները.

- Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշման ընդունում, մոնիթորինգ, բողոքների լուսաբանում և հասարակական իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլն,
- ՄԻՊ աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում:

V. Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով, կարելի է հանգել այն եզրակացությանը, **որ Ոլորտում իրականացվող քաղաքականությունը բոլորովին էլ չի բխում ինչպես Ոլորտում նախատեսված բարեփոխումների բազմաթիվ ռազմավարական ծրագրերի նպատակներից ու արդյունքային ցուցանիշներից, այնպես էլ ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից: Այսպիսի իրավիճակի հետևանք են երկրում դատա-իրավական բարեփոխումների և հակակոռուպցիոն պայքարի ներկա մարտահրավերները, որոնք արտահայտվել են 2018թ. հետո կոռուպցիայի ընկալման համաթվի հարաշարժում նվազման միտումի և համակարգային կոռուպցիայի մակարդակից ցածր վիճակում հայտնվելու ցուցանիշներում:**

Նույն կերպ ոչ ՀՀ 2025-2027 թթ. ՄԺԾԾ-ում, ոչ ՀՀ 2023-2026 թթ. Հակակոռուպցիոն 5-րդ ռազմավարության, հետևաբար՝ նաև ոչ էլ 2025 թ. պետական բյուջեում համապատասխան միջոցներ չեն հատկացվել Ոլորտի մարմիններին:

Ոլորտում 2025 թ. նախատեսված չի որևէ **վարկային և դրամաշնորհային ծրագիր և միջոցառում՝ օ**տարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացնելու համար, մինչդեռ Ոլորտի մարմինները այդպիսի աջացության լուրջ կարիք ունեն՝ **ապահովելու համապատասխան ոլորտային բարեփոխումների գործող ռազմավարություններով և ՀՀ կողմից կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններով և հանձնառություններով նախատեսված նպատակների ու արդյունքային ցուցանիշների կատարումը:**

Միաժամանակ, չկան **վստահելի տեղեկատվության աղբյուրներ ծրագրերի վերջնական շահառուներից** (ՀՀ քաղաքացիներ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ))՝ **մշակված վերջնական արդյունքի և ոչ ֆինանսական, կատարողական ցուցանիշների վերաբերյալ արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն հավաքագրելու համար**: **Այդ տեղեկատվությունը լրացվում է հենց իրենց՝ բյուջետային ծրագրեր մշակողների և իրականացնողների կողմից, ինչը թույլ չի տալիս համոզվել դրանց արժանահավատության մեջ** Ավելին, այդ գործում անբավարար է ՊԿՄ և ՍԱԻՄ մարմինների կառուցողական համագործակցությունը ՔՀԿ-ների և ՋԼՄ-ների հետ, որոնք ունեն բավարար ներուժ օգնելու վերոհիշյալ մարմիններին:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ Ոլորտի մարմինների աշխատակիցներն ունեն որոշակի դժվարություններ բյուջետային ծրագրերի **վերջնական արդյունքի, ոչ ֆինանսական ցուցանիշների մշակման, դրանց կատարման մասին հուսալի, ամբողջական ու արժանահավատ տեղեկատվություն հավաքագրելու գործում:**

Հետևաբար խիստ անհրաժեշտություն է դառնում, որպեսզի ՀՀ վարչապետի 2025թ. հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» N 36 – Ա որոշմանը համապատասխան Ոլորտի ԲԳԿ մարմինները սկսեն ակտիվորեն մշակել իրենց բյուջետային հայտերը, որտեղ կնախատեսեն.

- ՀՀ կառավարության գործունեության ծրագրի և գործող ոլորտային ռազմավարական ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցառումների ամբողջական իրականացման համար հիմնավորված ծախսային առաջարկություններ,
- ԿԶՆ նպատակների, միջազգային կազմակերպությունների նորմատիվ իրավական փաստաթղթերի և կնքված պայմանագրերի նպատակադրումների ու հանձնառությունների կատարման նպատակով նախաձեռնել ֆինանսավորման ապահովման ակտիվ աշխատանք,
- 2026թ. համար առավել նպատակային բյուջետային ծրագրեր՝ հստակ միջոցառումներով,

- բոլոր բյուջետային ծրագրերի նպատակներն ու վերջնական արդյունքային ցուցանիշները ուղղակիորն բխեցնել վերոհիշյալ ռազմավարական ծրագրերի, փաստաթղթերի, պայմանագրերի նպատակադրումների և հանձնառությունների հետ,
- բոլոր բյուջետային ծրագրերի քաղաքականության միջոցառումների համար մշակել վերոհիշյալ ռազմավարական ծրագրերի, փաստաթղթերի, պայմանագրերի նպատակադրումների և հանձնառությունների կատարմանն ուղղված **ոչ ֆինանսական (կատարողական) ցուցանիշներ,**
- բոլոր քաղաքականության միջոցառումների համար մշակել **հստակ ու չափելի ֆինանսական (կատարողական) ցուցանիշներ**,
- այդ նպատակով իրականացնել ՊԿՄ, ՍԱԻՄ մարմինների և ՔՀԿ-ների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների **մասնագիտական որակավորման բարձրացման ուղղությամբ շարունակական ուսումնական ծրագրեր**,
- մշակել և իրականացնել հստակ ծրագրեր **հակակոռուպցիոն բյուջետային ծրագրերի վերջնական արդյունքի, ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ առավել ամբողջական, արդյունավետ, հուսալի, արժանահավատ, օգտակար ու չափելի տեղեկատվություն հավաքագրելու ուղղությամբ,**
- մշակել և իրականացնել հստակ համագործակցության ծրագրեր **արհեստավարժ ՔՀԿ-ների, դրանց ցանցերի, ՁԼՄ-ների հետ՝ բյուջետային ծրագրերի կատարման մշտական մոնիթորինգ իրականացնելու ուղղությամբ**,
- և այլն:

This study has been developed with the financial support of the European Union, within the framework of a sub-grant provided under the "Budgets for Citizens" project implemented by a consortium led by the "Armenian Lawyers' Association" NGO.
It has been implemented by "Centre of Economic Right" NGO within the framework of the "Implementation of Justic Sector Budget Monitoring and Analysis" project.
The "Centre of Economic Right" NGO is responsible for the content, and it does not necessarily reflect the views of the European Union.